

ԱՐՑԱԽԻ ՄԱՅՐ ԲՈՒՅԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

Նոյեմբերի 16-ից 17-ը ԱրՊՀ-ում մեկնարկել են ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի նախապատրաստական աշխատանքները: Այս կապակցությամբ ԱրՊՀ-ում են ԳՊՏՀ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պարույր Քալանթարյանը և որակի ապահովման բաժնի պետ Ներսես Գևորգյանը:



ԳՊՏՀ գործընկերները հանդիպումներ են ունեցել ռեկտոր Ս. Մինասյանի, պրոռեկտորների և մի քանի ստորաբաժանումների ղեկավարների հետ, որոնց հետ համատեղ աշխատանքային քննարկումներ են ունեցել հավատարմագրման չափորոշիչների և ընթացակարգերի վերաբերյալ: Նշենք, որ հավատարմագրման գործընթացը համակարգելու է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (ՈԱԱԿ):

ԱրՊՀ-ՈՒՄ ԳՈՐԾԱՐԿՎԵՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՆ

Նոյեմբերի 6-ին մայր բուհում տեղի է ունեցել ԱրՊՀ իրավաբանական կլինիկայի պաշտոնական բացման արարողությունը: Միջոցառմանը մասնակցում էին ԱՅ ՄԻՊ Ռուբեն Մելիքյանը, ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը, ներկայացուցիչներ ԱՅ Ազգային ժողովից, ԱՅ և ՀՀ ՄԻՊ գրասենյակներից, ԱՅ և ՀՀ փաստաբանական պալատից, ԵՊՀ իրավաբանության ֆակուլտետից, համալսարանականներ, հյուրեր:




ուրախալի է ոչ պաշտոնական հասարակական մակարդակում մարդու իրավունքների պաշտպանությանը զբաղվող և մեկ կառույց ունենալը: Իրավաբանական կլինիկան շատ կարևոր քայլ է մարդու իրավունքների երաշխավորման, որակյալ իրավաբանական կրթության ապահովման ուղղությամբ»,- ասել է օմբուդսմենը: Իրավաբանական կլինիկայի բացման կապակցությամբ համալսարանականներին շնորհավորելու էին եկել ԵՊՀ իրավաբանական կլինիկայի վարիչ Քնարիկ Վարդանյանը, ՀՀ ՄԻՊ խորհրդակալ Սերգեյ Ղազիբյանը, ՀՀ փաստաբանական պալատի նախագահի խորհրդակալ Վրեժ Խաչիկյանը, ովքեր բարի երթ են մաղթել նորաբաց կլինիկային և նրա աշխատակազմին՝ հավաստիացնելով, որ յուրաքանչյուր կառույց իր հնարավորությունների չափով նպաստելու է նրա կայացմանը: Կլինիկայի փաստաբան-դասընթացավար Աշոտ Ապրեսյանը գործընկերների և ուսանողության անունից շնորհակալություն է հայտնել փաստաբանների պատրաստման դարբնոցի նախաձեռնողներին և նախաձեռնողներին՝ նշելով, որ իրենք ամբողջությամբ ընկալում են իրենց առաքելությունն ու ամենայն պատասխանատվությամբ են մոտենում դրան: «Արցախի պետական համալսարանը մի նոր առաքելություն է իրականացնում, և ես, ի դեմս կլինիկայի անձնակազմի, խոստանում եմ, որ մեր գործունեությամբ հուսախաբ չենք անելու: Ավելի կլինիկայի մասին դեռ խոսվելու, նրա հաջողությունների մասին լսվելու է:»

Ռեկտորը խոստովանում է, որ իրավաբանական կլինիկա ունենալու անհրաժեշտության մասին խոսվել է դեռևս իր պաշտոնակարման առաջին տարիներից, բազմիցս հիմնավորվել իրավունքի ամբողջական մասնագետների կողմից. «Իրավաբանական կլինիկան այլևս իրականություն է: Այդպիսի կառույց ունենալու վերաբերյալ շահագրգիռ քննարկումներ սկսվեցին հատկապես ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հետ հուշագրի կնքումից հետո, և այն կյանքի կոչվեց ԱՅ ՄԻՊ Ռուբեն Մելիքյանի ու ԱՄՆ Հայ իրավաբանական միության աջակցությամբ»: Ս. Մինասյանն անդրադարձավ նաև կլինիկայի նպատակներին՝ նշելով, որ

կլինիկան հետապնդում է մի քանի նպատակ՝ մեր բուհի ուսանողները մարդու իրավունքների պաշտպանության գործում հմտանալու, ինչպես նաև հանրապետության քաղաքացիները իրավաբանական անվճար խորհրդատվություն ստանալու հնարավորություն ունենան, ինչը կնպաստի դատական և իրավապահ մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: «Համոզված եմ, որ կլինիկայի գործունեության արդյունքում մի կողմից կնպաստենք փաստաբանական ծառայությունների զարգացմանն ու կայացմանը Արցախում, մյուս կողմից՝ կլինիկայի ուսանողները, հանրապետության քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնություն մատուցելուն զուգահեռ, սպազայում փաստաբանական ծառայությունների ոլորտում գործունեություն ծավալելու որոշում կկայացնեն»,- նշել է ռեկտորը՝ կոչ անելով քաղաքացիներին օգտվել կառույցի առաջարկած ծառայություններից: Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանը շնորհավորել է համալսարանականներին կարևոր իրադարձության կապակցությամբ ընդգծելով Հայաստան-Արցախ-Ախյուռք համատեղ ջանքերով մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ոչ պաշտոնական կառույցի կարևորությունը: «Ցանկացած երկրի ՄԻՊ-ի համար

ԱՐՊՀ-Ն ԵՎ «ԴԱՍԱՎԱՆԴԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԵՆ ՍՏՈՐԱԳՐԵԼ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում երիտասարդ կադրերի ներգրավման կարևորությունը՝ աշակերտների համար կրթական ռեսուրսների մատչելիության անհրաժեշտությունն ու կուտակված միջազգային փորձի կիրառման կարևորությունը՝ Արցախի պետական համալսարանի և «Դասավանդի, Հայաստան» կրթական հիմնադրամի միջև ստորագրվեց համագործակցության համաձայնագիր: Համաձայնագրի նպատակն է համատեղել ջանքերը հանրակրթության բնագավառում երիտասարդ մասնագետների ներգրավման և որակյալ կրթություն ապահովելու ուղղությամբ: Համաձայնագրով համակարգվում է «Դասավանդի, Հայաստան» կրթական հիմնադրամի և համալսարանի միջև համագործակցությունը երիտասարդ մասնագետներ-



րի պատրաստման, հավաքագրման, կրթության առնչվող միջոցառումների կազմակերպման և իրականացվող ծրագրերի առաջխաղացման ու տարածման ոլորտներում: ԱրՊՀ գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը կարևորում է նման համագործակցությունը: Նա գտնում է, որ համագործակցությունը շահավետ է լինելու երկուստեք. «Մի կողմից

համալսարանը հնարավորություն կունենա աշխատանքով ապահովելու իր շրջանավարտներին, մյուս կողմից՝ հիմնադրամն՝ ի դեմս համալսարանի, կադրերի ընտրության լայն հնարավորություն կունենա»: Նշենք, որ «Դասավանդի, Հայաստան» ծրագրի շրջանակում ընթացիկ ուսումնական տարվանից ԱրՊՀ-ում մագիստրոսական կրթություն են ստանում երեք ուսանողներ:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՍՊԱ - ՀՈԳԵԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Նոյեմբերի 13-ին ԱրՊՀ-ում մեկնարկել է ՊԲ սպա-հոգեբանների հնգօրյա վերապատրաստման հերթական հավաքը: Հավաքի առաջին օրը սպա-հոգեբանների և ուսանողության հետ հանդիպում են ունեցել ԱրՊՀ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, ԱՅ ՊԲ հրամանատարի ԱՅՍԱ զօնվ տեղակալ, գեներալ-մայոր Վարդան Բալայանը, «Ապագա» հոգեբանական կենտրոնի տնօրեն Արմեն Բեջանյանը, ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի մի խումբ աշխատակիցներ: Իր խոսքում Վ. Բալայանը կարևորել է ՊԲ սպա-հոգեբանների պարբերական հավաքների նշանակությունը, ընդգծել դրանց կարևորությունը անձնակազմի հետ տարվող աշխատանքների բարելավման գործում: Նա նաև կոչ է արել հավաքի մասնակիցներին ակտիվորեն մասնակցել դասընթացներին, քննարկումներ կազմակերպել դասընթացավարների հետ, փոխանակվել փորձով:



«Հավաքին մասնակցել են ՊԲ սպա-հոգեբանները և ԱՅՍԱ զօնվ սպաները, որոնց վերապատրաստումները ռազմավարական նշանակություն ունեն ինչպես զինված ուժերի, այնպես էլ քաղաքացիական հասարակության համար: Որակյալ սպա-հոգեբանների արդյունավետ աշխատանքի մտրիվ հնարավոր է խուսափել անցանկալի մի շարք երևույթներից», - նշել է Վ.Բալայանը: Գեներալ-մայորը նաև իր երախտագիտություն է հայտնել ԱրՊՀ շահագրգիռ կառույցներին մասնագիտական և կազմակերպչական աջակցություն ցուցաբերելու համար՝ նշելով, որ նախկինում ունեցած փորձը դրական արդյունքներ է տվել: ԱրՊՀ պրոռեկտոր Վ. Յարամիշյանը, մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ղեկան Շ. Այդինյանն ու «Ապագա» հոգեբանական կենտրոնի տնօրեն Արմեն Բեջանյանն իրենց հերթին շնորհակալություն են հայտնել ՊԲ հրամկազմին՝ ցուցաբերած վստահության համար, հավաստիացրել, որ դասախոսություններ-

րով հանդես են գալու ԱրՊՀ և ՀՀ-ից իրավիված փորձառու մասնագետներ: Վ. Յարամիշյանը նշել է նաև, որ սպա-հոգեբանների հավաքին զուգահեռ, ընթանում են նաև հանրակրթական դպրոցների միջին օղակի դասղեկների վերապատրաստման դասընթացները, որոնք վարում են «Ապագա» հոգեբանական կենտրոնում մասնագիտացած ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի ուսանող-աշխատակիցները: «Դեռահասության տարիքում գտնվող երեխաների շեղվող վարքի շտկմանն ուղղված թրեյնինգների ընթացքում ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի աշխատակիցների շարքերը համալրած հոգեբանության բաժնի ուսանողները ներկայացնելու են անցումային տարիքում երեխաների վարքի շեղման հիմնական պատճառները, այն նշելու մեթոդներն ու մոտեցումները»,- նշել է պրոռեկտորը: Սպա-հոգեբանների վերապատրաստման ծրագիրը տևել է նոյեմբերի 13-ից 17-ը, որի ընթացքում դասախոսություններով հանդես են եկել ԱրՊՀ, ՀՀ և ԱՅ ՊԲ փորձառու մասնագետներ:

Գ Ի Տ Խ Ո Ր Հ Ր Դ Ի Ն Ի Ս Տ

Նոյեմբերի 2-ին գումարված ԱրՊՀ գիտական խորհրդի հերթական նիստում քննարկվեցին կանոնակարգային մի շարք հարցեր, լսեցին հաշվետվություններ:

Օրակարգի առաջին հարցերը ենթադրում էին կանոնակարգային փոփոխություններ, մասնավորապես՝ ուսումնական պլանների ձևավորման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման, ուսումնական աշխատանքների հաշվառման նորմերը հաստատելու, «Կուրսային, ավարտական, մագիստրոսական աշխատանքների նախապատրաստման և պաշտպանության» կարգերում փոփոխություններ կատարելու մասին: Հաջորդիվ քննարկվեցին «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» գիտական հանդեսի կանոնադրությունը և ԱրՊՀ ուսումնական հրատարակությունների ձևերն ու նրանց ներկայացվող պահանջները: Վերջին երկու կանոնակարգերի բովանդակությունն ու կառուցվածքը ներկայացրեցին պրոռեկտորներ Վ. Ավանեսյանն ու Գ. Սահակյանը: Նրանք հիմնավորեցին այդ փաստաթղթերի կարևորությունն ու պահանջված լինելը, պատասխանեցին դրանց վերաբերյալ մի շարք հարցերի: Կանոնակարգերն ընդունվեցին միաձայն:

Գիտխորհուրդը լսեց մանկավարժության և հոգեբանության, ֆիզդաստիարակության, կերպարվեստի, ՆՁՊ և ԱԿ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնների 2016-2017 ուսումնական տարվա հաշվետվությունները, ընդունեց ի գիտություն:

Նոյեմբերի 27-ին կայացած գիտական խորհրդի նիստում հաստատվել են կանոնակարգային մի շարք փոփոխություններ, լսվել հաշվետվություններ,

ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՏՐՈՒՄՆԵՐ ԵՆ ԱՆՑԵԼ



Նոյեմբերի 6-ից 11-ը ԱրՊՀ մի խումբ ուսանողներ «Ապագա» հոգեբանական ծառայության կենտրոնում մասնակցել են դեռահասի վտանգավոր վարքագծի կանխարգելման թեմայով թրեյնինգների:

ԱրՊՀ-ՀՊՄՀ, մասնավորապես դրանց կից գործող հոգեբանական կենտրոնների համագործակցության շրջանակներում

ՀՊՄՀ դասախոսներ Ա. Բեջանյանի, Ն. Պողոսյանի և Մ. Մամիկոնյանի ղեկավարությամբ ԱրՊՀ մի խումբ ուսանողներ «Երեխայի հոգեկան զարգացումը գնահատող դիագնոստիկ փաթեթի կիրառական հիմնախնդիրները», «Ես և իմ միջավայրը» թեմաներով մասնակցել են մասնագիտական դասընթացների: «ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի աշխատանքներում, ինչպես հայտնի է, նախատեսվում է ընդգրկել նաև ուսանողներին: Այս նպատակով էլ մի խումբ ուսանողներ գործուղվել են գործընկեր համալսարանի համապատասխան կառույց՝ նախապատրաստվելու առաջիկա աշխատանքներին»,- պարզաբանում է ԱրՊՀ պրոռեկտոր Վ. Յարամիշյանը:

ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ

Նոյեմբերի 25-ին լրացավ ՀՀ և ԱՀ ազգային հերոս Մոնթե Սելբոնյանի ծննդյան 60-ամյակը, որի կապակցությամբ ԱրՊՀ-ում պատմության և իրավագիտության ֆակուլտետի նախաձեռնությամբ կազմակերպվել էր հուշ-ցերեկույթ: Միջոցառմանը ներկա էին ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, ԱրՊՀ ռեկտոր Մ. Մինասյանը, հերոսի մարտական ընկերներ, համալսարանականներ, զինվորականներ, ուսանողներ, հյուրեր: Միջոցառմանը հրավիրված հերոսի մարտական

ընկերներից Մարտիրոս Ժամկոչյանը պատմեց Ավոյի հետ նրա առաջին հանդիպման և հետագա համագործակցության մասին. «Հաճելի է ներկա գտնվել իմ հայրենիքի հերոսի հորեյանին նվիրված միջոցառումների շարքին: Հավատացած եղեք, եթե չիղեմք, չմեծարենք մեր ազգային մեծություններին, դատապարտված ենք ինքնաուրացման»,-ասում է Մ. Ժամկոչյանը: Միջոցառման գեղարվեստական մասում հերոսին ծոնվեցին ասունը, երաժշտական և պարային կատարումներ:

« ԿՈՎԿԱՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ » Դ Ա Ս Ը Ն Թ Ա Ց Ն Ե Ր Է Վ Ա Ր ՈՒ Մ Ա Ր Պ Հ - ՈՒ Մ

Երևանում գործող «Կովկասի ինստիտուտ» գիտահետազոտական կենտրոնի կողմից «Արցախը դիր քարտեզի վրա» ծրագրի շրջանակներում կազմակերպվող գործարար անգլերենի դասընթացին մասնակցում են նաև ԱրՊՀ ուսանողներ:



Դասընթացը, որ նախատեսված է 21-ից 35 տարեկան դասախոսների, թարգմանիչների, գործարարների և քաղաքացիական ծառայողների համար, անցկացվելու է սեմինարի ձևաչափով՝ երեք փուլով: Սեմինարը վարում էր «Կովկասի ինստիտուտ» գիտահետազոտական կենտրոնի ուսումնական ծրագրերի ղեկավար, Հայաստանում Հարավային Կովկասի հետազոտությունների ամերիկյան ինստիտուտի ներկայացուցիչ Նինա Իսկանդարյանը: Երկրորդ փուլի ընթացքում, որը մեկնարկել է նոյեմբերի 13-ին, մասնակիցները գործարար անգլերենի բարելավման հնարավորություն կունենան լեզվակրի հետ շփման արդյունքում: Խոսելով ԿԻ նպատակների և խնդիրների մասին՝ Ն. Իսկանդարյանն առանձնացնում է ուսումնական գործունեությունը: Նրա խոսքով, ինստիտուտի գործունեության շրջանակները ներառում են գիտահետազոտական աշխատանքների իրականացում, տարբեր ոլորտներում քաղաքականության մշակում, քաղաքական որոշումների լոբբինգ, հասարակության շրջանում իրազեկման մակարդակի բարձրացում, բազմակարծության ապահովում:

«Ինստիտուտի ուսումնական գործունեությունից է բխում «Արցախը դիր քարտեզի վրա» ծրագիրը, որի շրջանակներում կազմակերպվող գործարար անգլերենի դասընթացը նպատակ ունի բարելավելու և խորացնելու հանրային և քաղաքացիական ծառայողների անգլերենի իմացությունը: Քանի որ հայտեր

ստացել ենք նաև ԱրՊՀ ուսանողները, որոշեցինք ընդգրկել նրանց ևս»,- պարզաբանում է Ն. Իսկանդարյանն ու հավելում, որ դասընթացին մասնակցող ԱրՊՀ ուսանողները հետաքրքրված են մատուցվող նյութով, ուսումնասիրության համար հանձնարարվող ռեսուրսներով և լուրջ մոտեցում են ցուցաբերում նաև ինքնուրույն աշխատանքներին: Դասընթացին մասնակից ուսանողների կարծիքով նման սեմինարներն անհրաժեշտություն են, քանի որ այդպիսով իրենք հնարավորություն են ստանում խորացնելու գիտելիքներն ու կատարելագործելու հմտությունները: Բացի այդ, ԿԻ մասնագետների կողմից օգտագործվող ժամանակակից մեթոդները տեսական նյութը գործնականում ամրապնդելու հետաքրքիր տարբերակներ են առաջարկում: Նշենք, որ լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները մասնագիտական դասընթացներ են անցնելու ԿԻ երևանյան գրասենյակում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳԵՐՄԱՆԱՑԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆԻ ՀԵՏ



Նոյեմբերի 2-ին ԱրՊՀ գերմաներենի կենտրոնում հյուրընկալվել էր Գերմանիայի Բադեն - Վյուրթեմբերգ երկրամասի պատգամավոր, «Ալլընտրանք Գերմանիայի համար» կուսակցության խորհրդարանական խմբակցության անդամ Լարս Պատրիկ Բերգը, ում ուղեկցում էր Գերմանիայում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցիչ Հարություն Գրիգորյանը: Պ. Բերգը սեփական նախաձեռնությամբ է Արցախում: Արցախի մասին, ինչպես ինքն է խոստովանում, տեղյակ է այնքանով, որքանով Գերմանիայի ցանկացած քաղաքացի, այն տարբերությամբ միայն, որ ինքը խորհրդարանական նիստերից փոքր-ինչ ավելի է տեղեկացված:

Հանդիպման ընթացքում լսարանը հնարավորություն ունեցավ հարցեր ուղղելու խորհրդարանականին, իմանալու նրա տեսակետն ու Գերմանիայի դիրքորոշումը Արցախի և արցախյան հակամարտության վերաբերյալ: «Տարածաշրջանային կոնֆլիկտները հազվադեպ են հայտնվում խորհրդարանի օրակարգում կամ խորհրդակցություններում, քանի որ Գերմանիայում առկա են առավել լուրջ և խորքային խնդիրներ: Ինչը, սակայն, չի նշանակում, թե մենք սկզբունքորեն դեմ ենք անդրադառնալու տարածաշրջանային, մասնավորապես՝ Արցախյան հակամարտությանը»: Լ. Պատրիկ Բերգը Արցախի մասին իր տպավորություններն է կիսել ուսանողների հետ. «Երբ խորհրդարանական ընկերներիս ասացի, որ պատասխանում եմ այնպես Արցախ, բոլորը միանշանակ դեմ էին: Իրենց դիրքորոշումը նրանք հիմնավորում էին ծայրաստիճան վտանգավորությամբ, բայց ես տեսա տարբերակն այլ իրականություն. զարգացող, խաղաղ մի երկիր, որտեղ մարդիկ հանգիստ զբոսնում են փողոցում»: Խորհրդարանականը մշել է նաև, որ Արցախ կատարված ու կատարվելիք այցերը կնպաստեն Արցախի ծանաչմանն ու Արցախյան հիմնախնդրի լուծմանը: «Արցախի երիտասարդությունը պիտի կրթական, գիտական, մշակութային տարաբնույթ շփումներ ունենա Եվրոպայի հետ, սակայն իր ապագան պիտի տեսնի հայրենիքում»,- ասել է գերմանացի խորհրդարանականը:

